ԱՍՏՐԱԽԱՆԻ ԾԽԱԿԱՆ ԵԿԵՂԵՑ. ԴՊՐՈՑԸ

Աստրախանի ծխական եկեղեցական դպրոցը, որ բացված է եղել 1868-69 թ. ս. Աստուածածին աւագ եկեղեցու բակում, տարիների ընթացքում միդասեանից դարձել է երեքդասեան, իւրաքանչիւր դասարանը երկու տարուայ դասընթացքով, թեմական (Епархіальное) դպրոցի անուան տակ։

Յիշեալ դրութեան մէջ դպրոցը պահել է միայն երկու տարի, 1879 թւին տալով 5 ընթացաւարտներ։

Աշակերտների սակաւութիւնը մի կողմից և նիւթական միջոցների սղութիւնը միւս կողմից, հարկադրել են դպրոցական հոգաբարձութեան՝ բաւականանալ երկդասեան և ապա մի դասեան դպրոցով, որը սակայն մի տեսակ քաշ տալով իր աննախանձելի դրութիւնը, փակւել է 90-ական թւերին։

Թեմական դպրոցում աւանդւելիս են եղել՝ հայոց, ռուսաց, ֆրանսիացւոց լեզուներ, կրօն, բնական պատմութիւն, թւաբանութիւն, աշխարհագրութիւն, հայոց, ռուսաց և ընդհանուր պատմութիւն, հաշուա-

պանութիւն, գծագրութիւն, նկարչութիւն, և ձայնագրեալ երգեցողութիւն։

Դպրոցի ուսումնական մասը գտնւել է թեմական տեսչի ձեռքին, իսկ տնտեսականը հոգաբարձութեան։ Պահպանութեան միջոցները կազմել են՝ սեպհական դրամագլուխ, եկեղեցական հասոյթներ և պատահական նուիրատուութիւններ։ Դպրոցում ուսուցչութեան պաշտօն վարել են գլխաւորապէս՝ միջին կրթութիւն ստացած և քաղաքային ուսումնարանների ուսուցիչներ։

Աշակերտութիւնը եղել է առաւելապէս ժողովրդի հասարակ դասակարգից, որոնք ուրիշ տեղ կդժուարանային ուսումնավարձ վճարել։

Ն. Ք. ԻԼԻԱԶԵԱՆ